Հայկական Կարիտաս
Armenian Caritas

ԵՐԿԱՄՅԱ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2022 23

Մենք Կարիտասն ենք
Հայկական Կարիտասը բարեգործական հասարակական կազմակերպություն է, որը հիմնադրվել է 1995 թվականին Հայ Կաթողիկե եկեղեցու կողմից, Կաթոլիկ օգնության ծառայության լայնածավալ աջակցությամբ: Կազմակերպության անվանումն առաջացել է լատիներեն «LOVE»՝ «ՍԵՐ» բառից: Մեր ուշադրության կենտրոնում են առավել խոցելի սոցիալական խմբերի պաշտպանության, խնամքի և ներառման, առաջնային առողջության պահպանման, համայնքահեն զարգացման, հայրենիք վերադարձողների կայուն վերաինտեգրման, մարդասիրական ու զարգացման ծրագրերը:
Հայկական Կարիտասն իր հիմնադրումից ի վեր անմիջական աջակցություն է ցուցաբերում հազարավոր մարդկանց:

Մեր առաքելությունն է՝ սիրով և սրտացավությամբ նպաստել անձի համակողմանի զարգացմանը և համայնքների հզորացմանը՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը:
Մեր տեսլականն է՝ լինել ուժեղ և նշանակալի դերակատար Հայաստանի Հանրապետությունում սոցիալական արդարության և սոցիալական պաշտպանության ամրապնդման գործում:
Մեր ռազմավարական առաջնահերթությունները ներառում են խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության, միգրացիայի և ինտեգրման, համայնքի համաչափ զարգացման և արտակարգ իրավիճակներին դիմակայելու ոլորտները:

Ո՞ւմ մասին ենք մենք հոգ տանում
Մենք՝ Հայկական Կարիտասի աշխատակիցներս և կամավորներս, օգնում ենք մեր հասարակության ամենախոցելի անդամներին գտնելու արժանապատիվ և արդար կյանքի ճանապարհ՝ անկախ նրանց կրոնական պատկանելությունից, ռասայից, սեռից և այլ տարբերություններից: Տարեկան ավելի քան հարյուր հազար մարդ ստանում է մեր աջակցությունը: Մենք թիրախավորում ենք անապահով ընտանիքների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց, փախստականների և Արցախից բռնի տեղահանված բնակչության, ինչպես նաև գյուղական համայնքների երեխաներին՝ տրամադրելով սոցիալ-հոգեբանական, հումանիտար, զարգացման և բժշկական օգնություն:



Սիրելի՛ եղբայրներ և քույրեր ի Քրիստոս

Ամեն տարի Հայկական Կարիտասը ներկայացնում է Հայաստանի ամենակարիքավոր մարդկանց աջակցությանն ուղղված իր գործունեության ամփոփ հաշվետվությունը: Հայկական Կարիտասը սրտանց հանձնառություն ունի պայքարելու աղքատության ու անարդարության դեմ, որոնք հանգեցնում են մարդկային ողբերգության և առավել խոցելի իրավիճակներում ապրող մարդկանց դուրսմղմանը: Հայկական Կարիտասի ողջ անձնակազմը իր գոյության ընթացքում, համերաշխորեն համախմբված, չի դադարել հանուն ավելի լավ ապագայի աշխատելուց, ապագա, որտեղ ոչ ոք հետ չի մնա՝ միշտ մոտ լինելով ամենախոցելի մարդկանց ու ընչազրկվածների կարիքներին, միայնակ տարեցներին, հաշմանդամություն ունեցող երեխաներին և մարգինալացված այլ խմբերի ու համայնքների՝ շարունակաբար աջակցելով և ուղղորդելով նրանց՝ հաղթահարելու իրենց առջև ծառացած մարտահրավերները:

Այսօր «Հայկական Կարիտաս»-ը սոցիալական, հումանիտար և զարգացման տարբեր ծրագրեր է իրականացնում Հայաստանի գրեթե բոլոր մարզերում՝ հիմնական շեշտադրում անելով Շիրակի, Լոռու, Գեղարքունիքի, Արարատի, Սյունիքի, Կոտայքի, Արմավիրի, Տավուշի և Երևանի մարզերում: Այսպիսով, «Հայկական Կարիտաս»-ը նպաստում է անհատի բազմակողմանի զարգացմանն ու համայնքների հզորացմանը՝ հարգելով յուրաքանչյուր անհատի արժանապատվությունը:

«Հայկական Կարիտասը», հավատարիմ մնալով իր առաքելությանը, շարունակում է դրական փոփոխություններ բերել հազարավոր մարդկանց՝ իրականացնելով սոցիալական, կրթական, ներառական, հանրային առողջապահական և արտակարգ իրավիճակների արձագանքման ծրագրեր: 2023 թվականի սեպտեմբերից՝ Արցախից բռնի տեղահանված և քաղաքացիություն չունեցող հայերի սարսափելի ողբերգությունից հետո, «Հայկական Կարիտասն» սկսել է Արագ արձագանքման կոչ՝ տուժած բնակչության կարիքները բավարարելու և հետտրավմատիկ հոգեսոցիալական ծառայություններ փախստականներին տրամադրելու համար:

Անշուշտ, մենք միայնակ չենք մեր դժվարին առաքելության կատարման մեջ. Հայ և Համաշխարհային կաթոլիկ եկեղեցիներն իրենց բարեգործական կառույցներով, Կարիտաս Եվրոպայի և Միջազգային Կարիտասի անդամ կազմակերպություններով, Եպիսկոպոսների համաժողովներով, Գերմանիայի, Ավստրիայի և Լիխտեյնշտեյնի կառավարություններով և զգալի թվով այլ բարերարներ մեզ հետ են: Ցանկանում ենք մեր անկեղծ երախտագիտությունը հայտնել մեր բոլոր բարերարներին ու գործընկերներին, որոնք աջակցում են մեզ մարդկանց ծանր վիճակը մեղմելու և մեր երկրի զարգացման գործում:

Որպես վերջաբան՝ Սուրբ Ծննդյան և Ամանորի տոների կապակցությամբ մեր սրտագին և անկեղծ մաղթանքներն ենք հղում ձեզ և ձեր սիրելիներին՝ հայցելով Նորածին Թագավորի՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսի օրհնությունը՝ որպես ավետիս ծնունդի: Մեր Տերը գալիս է մխիթարելու մեզ բոլորիս և սեր ու խաղաղություն տալու բոլոր նրանց, ովքեր հետևում են Իրեն: Ղուկասի ավետարանում կարդում ենք հետևյալ խոսքերը. «Մի՛ վախեցիր. քանզի ահա ես ձեզ մեծ ուրախության բարի լուր եմ հռչակում, որը կլինի ողջ ժողովրդի համար: Որովհետև այսօր Դավթի քաղաքում ձեզ համար մի Փրկիչ ծնվեց՝ Մեսիան և Տերը» (Ղուկ. 2.10-11):

Միշտ մնալով աղոթքների զորությամբ՝

ՌԱՖԱՅԵԼ ԲԵԴՐՈՍ
21-րդ կաթողիկոս-պատրիարք հայ կաթողիկե Հայկական Կարիտասի նախագահ

Գագիկ Տարասյան

Կարիտասի սիրտը բաբախում է մարդկանց ու մարդկային բարության հանդեպ նրանց հավատի շնորհիվ

Ամեն տարի մեզ բերում է նոր մարտահրավերներ: Այս տարին չի տարբերվում նախորդներից: Բայց միևնույն ժամանակ այս մարտահրավերների շնորհիվ է, որ մենք դառնում ենք ավելի ուժեղ ու կարեկցող: Հպարտությամբ կարող եմ ասել, որ մեր անժամկետ քրտնաջան աշխատանքը տվել է իր արդյունքը այս դժվարին տարում:

Լեռնային Ղարաբաղում հակամարտության շարունակությունը և դրա հետևանքները հարյուրավոր մարդկանց թողեցին անօթևան և օգնության կարիքի մեջ: 2023 թվականի սեպտեմբերի 24-ին ԼՂ-ից սկսվեց հայերի զանգվածային բռնի տեղահանումը դեպի Հայաստան: Հոկտեմբերի 9-ի դրությամբ Հայաստան է եկել 100,632 բռնի տեղահանված, այդ թվում՝ մոտ 30,000 երեխա: Հայկական Կարիտասն առաջնագծում էր բռնի տեղահանված բնակչությանը մարդասիրական, հոգեբանական և նյութական աջակցություն ցուցաբերելու համար:

Մեր գործընկերների աջակցությամբ մենք մշակել ենք ծրագրեր՝ երեխաների, տարեցների, հաշմանդամություն ունեցող անձանց առավել խոցելի խմբերի սոցիալական պաշտպանությունն ապահովելու համար. կանայք և երիտասարդները աջակցել են միգրանտներին և փախստականներին՝ խորհրդատվություն տրամադրելով աշխատանքի, ինտեգրման և ներառման վերաբերյալ: Սա ամրապնդեց և կենտրոնացրեց համայնքի ներուժը, բարձրացրեց մարդկանց և սահմանամերձ համայնքների ճկունությունը՝ նպատակամիտված լինելով հասնելու և պահպանելու երկարաժամկետ դրական ազդեցություն նրանց կյանքի վրա: Ընդհանուր առմամբ մենք տարեկան օգնում ենք ավելի քան 100,000 անհատների:

Հասարակական խնդիրները, որոնց բախվում ենք ամեն օր, ավելի բացասական ազդեցություն կունենային, եթե մենք ուրիշներին մեզնից առաջ չդասեինք: Կարիքավոր մարդկանց օգնելու առաջնագծում մեր ծրագրի անձնակազմի անդամներն են սոցիալական աշխատողները, հոգեբանները, կամավորները, բժշկական անձնակազմը և, իհարկե, կառավարչական թիմը, որոնք մարդկանց կողքին են և մարդկանց հետ:

Մենք հավատում ենք, որ հոգ տանել այն մարդկանց մասին, որ այլ ելք չունեն, քան դիմանալ իրենց տառապանքին, քրիստոնեական եղբայրական սիրո արտահայտություն է: Միջազգային Կարիտասի և Կարիտաս Եվրոպայի ռազմավարություններով ուրվագծված՝ մենք ընդունում ենք մի շարք արժեքներ ու սկզբունքներ, որոնք առաջնորդում են մեր ներկայությունը, պարտավորություններն ու գործողությունները Հայաստանում: Կարիտասի սիրտը բաբախում է մարդկանց և մարդկային բարության հանդեպ նրանց հավատի շնորհիվ: Դրա համար ուզում եմ շնորհակալություն հայտնել մեր աշխատակիցներին ու կամավորներին: Հայկական Կարիտասի հիմնական ոգեշնչումը մարդիկ են, և այդ ոգեշնչման առանցքում մարդկային հարաբերություններն են:

Ես լիահույս եմ, որ մենք այնքան ուժեղ կլինենք, որ օգնության ձեռք կմեկնենք բոլոր կարիքավորներին:

Մեր տեսլականն անփոփոխ է. Սուրբ Գրքից և Եկեղեցու Կաթոլիկ սոցիալական ուսմունքից ներշնչված՝ մենք ստեղծում ենք մի միջավայր, որտեղ մարդիկ միայնակ չեն, երբ կարիքի մեջ են: Նրանց արժանապատվությունը և հիմնական իրավունքները պաշտպանված են: Արդարությունն ու սերը հաղթում են: Մեր տեսլականն է՝ մարդկանց ներաշխարհում կայուն ու դրական փոփոխություններ կատարել ՝ խթանելով սոցիալական արդարությունը և կայուն զարգացումը Հայաստանում:

Հայկական Կարիտասի գործադիր տնօրեն

Հայկական Կարիտասի ռազմավարական ուղղությունները

Սիրով և սրտացավությամբ նպաստել անձի համակողմանի զարգացմանը և համայնքների հզորացմանը՝ հարգելով յուրաքանչյուրի արժանապատվությունը:



Խոցելի խմբերի սոցիալական պաշտպանություն

Նպաստել խոցելի խմբերի սոցիալական պաշտպանության ապահովմանը՝ տրամադրելով հնարավորություններ սոցիալական արդարության, կայուն զարգացման և ներառման համար:

Նպաստել դժվարին իրավիճակներում հայտնված, հաշմանդամություն ունեցող երեխաների և տարեցների իրավունքների պաշտպանությանը:Հասանելի դարձնել հոգածության և խնամքի ծառայությունները՝ 18 տարին լրացած ՀՈՒԱ և տարեցների համար ՀԿ թիրախ մարզերում:Նպաստել կյանքի դժվարին իրավիճակում հայտնված երեխաներին և երիտասարդներին տրամադրվող աջակցող և սոցիալ-հոգեբանական ծառայությունների հասանելիությանը: Նպաստել տարեցների, ԿԴԻՀ երեխաների, ընտանիքների, ՀՈՒԱ հասարակության մեջ ներառմանը ՀԿ թիրախ մարզերում:

Գյումրիում Հայկական Կարիտասի «Տնային խնամք» ծրագրի շահառու 88-ամյա Ռազմիկ Գևորգյանն ապրում է կնոջ՝ Ժենյա Գևորգյանի հետ: Ռազմիկն ու Ժենյան՝ երկուսն էլ տառապում են հիվանդություններից, այդ թվում՝ սրտի առիթմիա, երակային թրոմբոզ, և ունեն հաշմանդամության խմբեր: Ամուսինը կարող է տանը քայլել կամ շարժվել միայն կնոջ օգնությամբ: Նրանց համար հեշտ չէ, քանի որ երեխաները վաղուց հեռացել են և ապրում են Ռուսաստանի Դաշնությունում:

Երկար տարիներ նյութական խնդիրների ու հիասթափությունների պատճառով զույգը ծննդյան տարեդարձներ չէր նշում: Այս տարի ծրագրի սոցիալական խնամակալի նախաձեռնությամբ Ռազմիկ Գևորգյանի ծննդյան օրվա կապակցությամբ անակնկալ էր պատրաստվել: Ծրագրի աշխատակիցներն այցելել են տարեց զույգին և նրանց օրը վերածել տոնի: «Շնորհակալ եմ Հայկական Կարիտասի անձնակազմին այս անակնկալի համար, վաղուց ծննդյանս օրը չէի նշել...»,- ասում է Ռազմիկ պապը:

Երբ 2018 թվականի ամռանը նա առաջին անգամ հայտնվեց նորաբաց «Սաբինե» փոքր խմբով տանը, հետաքրքրված էր ամեն ինչով: Ուշագրավ է, որ ամեն ինչ ձգտում էր իմանալ ամենայն մանրամասնությամբ, քանի որ նրան հետապնդում էր մանկատանն ապրող երեխայի մշտական անորոշության ու անհանգստության զգացումը: Հետո նա հանգստացա՛վ, հանգստացա՛վ ու հասկացավ, որ... տանն է: Նրան թողել են ծնողները. կրտսեր եղբայրն ու քույրը մանկատանն են դեռևս 2014 թվականից: Թեև հոր հետ հարաբերությունները մասամբ պահպանվել են, բայց մայրն առհասարակ անհետացել է երեխաների կյանքից: 2018 թվականին Մանեն քրոջ ու եղբոր հետ տեղափոխվել է «Սաբինե» և մինչ օրս ապրում է այնտեղ: «Ես այնքա՞ն երախտապարտ եմ ճակատագրին, որ կյանքիս ամենադժվար ժամանակահատվածում, երբ ծնողներս ինձ հետ չէին, ապրում էի «Սաբինե»-ում, որը փոխարինեց իմ ընտանիքին և դարձավ իմ տունը: Հիմա միայն մի ցանկություն ունեմ՝ մնալ այստեղ մինչև չափահասություն»,- մի անգամ խոստովանել է նա: 2020 թվականին ծրագրի թիմի ջանքերով վերականգնվել է կապը երեխաների մոր հետ: Կրտսեր քույրն ու եղբայրն իրենց կամքով որոշեցին հեռանալ «Սաբինե»-ից և սկսեցին ապրել մոր և նրա երկրորդ ընտանիքի հետ: Մանեն նրանց հետ չգնաց: Նրա հինգ տարիները «Սաբինե»-ում ապրելու և ծրագրից օգտվելու կավարտվեն, երբ նա չափահաս դառնա: Միևնույն ժամանակ Մանեն ավարտել է դպրոցը և ուսումը շարունակում է բժշկական քոլեջում, որտեղ ունի սիրելի մասնագիտություն: «Սաբինե» տան կազմակերպած մասնագիտական դասընթացների շնորհիվ նա տիրապետում է դիմահարդարման արվեստին, կարի գաղտնիքներին և բազմաթիվ այլ հմտությունների, որոնք մեծապես կօգնեն նրան կյանքում: Մանեն հավատում է իր ուժերին, ինքնավստահ է, լավատես և ունի նվիրական երազանք՝ ապահովել իր ընտանիքին և երեխաներին այն սիրով ու ջերմությամբ, որ նա ստացել է վերջին հինգ տարիների ընթացքում: «Ես այլևս չեմ դժգոհում իմ ճակատագրից և վստահ եմ, որ Աստված ինձ շատ է սիրում, քանի որ նա կապեց իմ կյանքը «Սաբինե»-ի հետ»:

Ծանոթացե՛ք Հայաստանի Գյումրի քաղաքից 14-ամյա Լիդային: Նա խելացի, աշխատասեր և խիզախ երիտասարդ աղջիկ է, սիրում է դաշնամուր նվագել և երգել: Բոլոր դժվարությունները Լիդան հաղթահարում է կամքի ուժով ու վճռականությամբ:

Լիդայի ուղին անսպասելի շրջադարձ ունեցավ, երբ երիտասարդ տարիքում ստիպված էր երկու բարդ վիրահատության ենթարկվել: Այս վիրահատությունների հետևանքով նրա տեսողությունը վատացավ, բայց Լիդան չտրվեց հոռետեսության: Հայկական Կարիտասի «Իմ իրավունքը. ներառական կրթությունը Հայաստանում և Կոսովոյում», Հայկական Կարիտաս նախագծի միջազգային փորձագետ Պետրա Ֆլիգերի օգնությամբ նա ստացավ հատուկ ակնոց՝ +20 հզորությամբ: Այս ակնոցը միանգամայն փոխեց Լիդայի կյանքի որակը՝ զգալիորեն բարելավելով նրա տեսողությունը: Մինչ ակնոց կրելը սովորելու համար աղջկան անհրաժեշտ էին արհեստական լույս և հատուկ չափի գրքեր: Սակայն նոր ակնոցի օգտագործման պարագայում նվազեց այս օժանդակ միջոցների անհրաժեշտությունը: Լիդայի առաջադիմությունը դպրոցում բարելավվեց, նա սկսեց ավելի շատ զբաղվել իր կրթության խնդիրներով: Ակնոցը նրա համար բացեց հնարավորությունների մի ամբողջ աշխարհ:

Լիդան հաճախում է նաև երաժշտական դպրոց, դաշնամուր է նվագում և երգում: Չնայած կյանքի մարտահրավերներին՝ նա զգալի հաջողությունների է հասել նաև երաժշտական գործունեության մեջ: 2020 թվականից Ավստրիական «Տեսողության խնդիրներ ունեցողների և կույրերի ասոցիացիայի» ջանքերի շնորհիվ Լիդան կարողանում է ինքնուրույն կատարել տնային աշխատանքները: Ակնոցին զուգակցված խոշորացույցը երկակի հզոր միջոց է նրա ակադեմիական հաջողության համար:
Լիդայի մայրը շնորհակալություն է հայտնում



խոշորացույցի համար՝ ընդգծելով դրա օգտակարությունը աղջկա ուղղագրությունն ու քերականությունը բարելավելու գործում: Ուսուցիչները ևս ընդգծում են Լիդայի հաջողությունը, որի վկայությունը դպրոցում բարձր գնահատականներ ստանալն է: Բացի ակադեմիական զբաղմունքներից, Լիդան խոշորացույցն օգտագործում է տարբեր հետաքրքրությունների համար՝ գրականություն կարդալուց մինչև աշխարհի քարտեզի ուսումնասիրում ու երաժշտական բառ-եզրույթների վերծանում: Լիդայի ոգեշնչող ուղին վկայում է նրա մտքի ճկունության և օժանդակ տեխնոլոգիաների փոխակերպող ուժի մասին:

Միգրացիա և ինտեգրում

Նպաստել միգրանտների և տեղահանվածների շահերի և իրավունքների պաշտպանությանը և կայուն ինտեգրմանը՝ քաղաքականությունների, մեխանիզմների և ծառայությունների բարելավմամբ:

Նպաստել միգրանտների և տեղահանված անձանց սոցիալ-տնտեսական վիճակի բարելավմանը նորարարական մոտեցումների և հնարավորությունների զարգացմամբ:
Նպաստել թիրախ մարզերում անկանոն միգրացիայի բացասական հետևանքների վերաբերյալ իրազեկվածության մակադարկի բարձրացմանը:
Նպաստել միգրացիոն ոլորտի համապատասխան քաղաքականությունների, մեխանիզմների և դրանց կիրարկման բարելավմանը (ԾՊ միջոցով):

Տիկին Անահիտը 36 տարեկան է, ամուսնացած է և ունի երեք երեխա: Նա միայնակ մեկնել է Գերմանիա 2022 թվականի փետրվարին՝ «արյան լեյկոզ» ախտորոշումից հետո բուժօգնություն ստանալու նպատակով: Գերմանիա գնալու համար նրանք ստիպված են եղել վաճառել իրենց բնակարանը: Նրանք ներկայումս ապրում են վարձով բնակարանում: Գերմանիայում բուժօգնություն ստանալուց հետո պարզել են, որ նա ուռուցք ունի: Այնուհետև նա վիրահատվել է և ստացել անհրաժեշտ բժշկական օգնություն: 2022 թվականի հունիսին վերադարձել է հայրենիք և դիմել «Համատեղ վերաինտեգրման ծառայություններ» ծրագրին միանալու համար, և նրա իրավասությունը հաստատվել է:

Մոտ 7 տարի առաջ՝ նախքան Հայաստանից մեկնելը, նա հաճախել է մատնահարդարման դասընթացների, քանի որ միշտ հավանել է այդ մասնագիտությունը, բայց անհրաժեշտ նյութեր ու գործիքներ ձեռք բերելու միջոցների բացակայության պատճառով երբեք վարպետ չի աշխատել: Նա որոշել է օգտագործել վերաինտեգրման բյուջեն մատնահարդարման և ոտնահարդարման դասընթացներին մասնակցելու համար, որ թարմացնի իր գիտելիքները և կատարելագործվի որպես վարպետ: Աջակցման ծրագրի շնորհիվ նա կարողացավ ձեռք բերել անհրաժեշտ գործիքներ ու նյութեր՝ որպես վարպետ իր աշխատանքն սկսելու համար: Դասընթացները հաջողությամբ ավարտելուց հետո նա սկսեց աշխատել տանը և կազմել հաճախորդների ցուցակ: Այժմ նա աշխատում է Գեղեցկության սրահում:



Պարոն Միկոյանը 40 տարեկան է, ամուսնացած, ունի երկու երեխա: Նա կնոջ և երկու երեխաների հետ Գերմանիայից վերադարձել է 2022 թվականի օգոստոսին: Մինչ Գերմանիա մեկնելը նրա ընտանիքն ապրում էր Ուկրաինայում: Երբ պատերազմն սկսվեց, նա ընտանիքի հետ տարհանվեց Գերմանիա՝ թողնելով արագ սննդի բիզնեսը: Մի քանի ամիս Գերմանիայում ապրելուց հետո նրանք որոշեցին վերադառնալ հայրենիք և դիմել օգնության: Վերադարձողը որոշել է օգտագործել վերաինտեգրման բյուջեն՝ Հայաստանում արագ սննդի իր բիզնեսը վերսկսելու համար: Նա ցանկանում էր Ուկրաինայից բերել բոլոր այն սարքավորումները, որ օգտագործում էր իր արագ սննդի բիզնեսում, բայց չկարողացավ:

Մինչ Հայաստանից հեռանալը նրանք խանութ ունեին Աշտարակ քաղաքում և մոտ 3 տարի զբաղվել են այդ բիզնեսով: Ունենալով մրգերի և գյուղատնտեսական այլ ապրանքների վաճառքի փորձ՝ նա որոշել է վերաինտեգրման բյուջեով բանջարեղենի ու գյուղմթերքների վաճառքի խանութ հիմնել:

Շուրջ 50 քմ մակերեսով խանութը գտնվում է Աշտարակ քաղաքի կենտրոնական փողոցներից մեկում: Պարոն Միկոյանը նշում է, որ շատ երախտապարտ է Հայկական Կարիտասի կողմից իրականացվող «Համատեղ վերաինտեգրման ծառայություններ» ծրագրին, որը թույլ է տվել ձեռք բերել բոլոր անհրաժեշտ էլեկտրոնային սարքավորումները, վերանորոգել վարձակալած խանութը և կառուցել ներկառուցված սառնարան՝ սնունդը պահպանելու և թափոնները նվազեցնելու համար: «Ես եկամուտ չունեի, բայց Հայկական Կարիտասի շնորհիվ մենք կարողացանք վերականգնել մեր ընտանիքի նյութական կայունությունը»,- հավելում է հայրենիք վերադարձած Միկոյանը:

Շողիկը և իր ընտանիքը տեղահանվել են Շուշիի շրջանի Քարինտակ գյուղից (Լեռնային Ղարաբաղ): Պատերազմի առաջին օրերին նա չորս երեխաների հետ գյուղից մեկնել է Հայաստան: Շողիկը պատմեց, որ գյուղից հեռացել են՝ չհասցնելով մինչև իսկ կոշիկ հագնել: «Ամեն ինչ մնաց, ոչինչ չվերցրինք մեզ հետ՝ մտածելով միայն մեր կյանքը փրկելու մասին: Չէինք էլ պատկերացնում, որ ընդմիշտ ենք լքում գյուղը»:

Ավագ որդին մասնակցել է 2020 թվականի 44-օրյա պատերազմին և այնտեղ մնացել մինչև ադրբեջանական բանակի վերջին ներխուժումը: Նրա որդին վիրավորվել է հարձակումների ժամանակ և թոքերի վիրահատության է ենթարկվել:

Շողիկն ասաց. «Այն ահեղ օրերին չէինք պատկերացնում, որ կկարողանանք մեր ունեցվածքը մեզ հետ վերցնել: Բացի այդ՝ մտածում էինք՝ դեռ կվերադառնանք մեր գյուղ: Պարզվեց, որ ամեն ինչ թողել ենք: Երկու տուն թողեցինք, երեք մեքենա, մի մեծ խանութ, ի վերջո մեր հողը, եկանք Հայաստան ու պիտի սկսենք մեր կյանքը նորից, այսինքն՝ զրոյից: Երեխաների հետ դուրս եկանք Ղարաբաղից. այնտեղ մնացին ավագ տղաս ու ամուսինս»:

Շողիկի քույրը Հայաստանում է ապրում: Եկան ու 40 օր մնացին նրանց տանը: Քանի որ 15 հոգով համակեցությամբ ապրելն անհնար էր, որոշեցին էժան, կիսակառույց փոքրիկ տուն ձեռք բերել: Տուն գնելու հարցում նրանց օգնել են հարազատները:

Այժմ Շողիկն աշխատում է Բյուրավան գյուղի դպրոցում որպես հավաքարար: Չորս երեխա ունի, ավագ որդին ամուսնացած է: Նա ապրում է հարսի, թոռան, տատիկի, պապիկի հետ: Նրանք բոլորն էլ ապրել են շատ ծանր պայմաններում:

Այնուհետև դիմեցին Հայկական Կարիտասի «Կառուցենք տներ, ո՛չ պատերազմին» ծրագրին, որը ֆինանսավորվում էր Լեհաստանի օգնության գործակալության կողմից: Ընտանիքը ներգրավվեց նախագծում: Առանձնատան ննջասենյակները, հյուրասենյակը և խոհանոցը վերանորոգվեցին:

Շողիկը գոհունակություն հայտնեց Հայկական Կարիտասին և ասաց. «Մենք լավ տեղավորված ենք հարմարավետ բնակարանում. երեխաներն ունեն իրենց սենյակը, մենք՝ մեր ննջասենյակը, խոհանոցը. հարմարությունները շատ լավն են, գոհ ու շնորհակալ ենք: Տղայիս առողջությունն այժմ լավ է»:

Լոռի
Շիրակ
Երևան
Արարատ
Կենտրոններ և գրասենյակներ
Շիրակ
Լոռի
Արարատ
Սյունիք
Երևան
Գեղարքունիք

Ծրագրեր

- Շիրակ
- Լոռի
- Արարատ
- Սյունիք
- Երևան
- Կոտայք
- Արմավիր
- Տավուշ
- Գեղարքունիք

Համայնքի համաչափ զարգացում

Նպաստել համայնքների համաչափ զարգացմանը՝ հիմնական դերակատարների անմիջական մասնակցությամբ:

Օժանդակել ՀՀ Շիրակ, Լոռի, Գեղարքունիքի մարզերի միավորված թիրախ համայնքներում ժողովրդավարական գործընթացների կայացմանը՝ ՏԻՄ-ՀԱՄԱՅՆՔ երկխոսության միջոցով:Բարձրացնել ՔՀԿ դերը միավորված թիրախ համայնքներում՝ կարողությունների զարգացման և միջոլորտային կապերի ընդլայնման միջոցով: Նպաստել կայուն գյուղատնտեսության (էկոլոգիական, սոցիալական և տնտեսական) և ձեռնարկատիրության կայացմանը թիրախ համայնքներում՝ նորարարական, տեխնոլոգիական, ենթակառուցվածքային և գործարար ներուժի զարգացմամբ: Զարգացնել ՄԿՈՒ ոլորտը թիրախ համայնքներում՝ մեթոդական, ձեռնարկատիրական և համագործակցային ներուժի հզորացմամբ:ՀԿ փորձի վրա հիմնված համայնքային համախմբման և համակողմանի զարգացման մոդելի մշակում:

Սանուկյանի բազմանդամ ընտանիքն ապրում է Շիրակի մարզի Հայկավան գյուղում: Ներկայումս ընտանիքի անդամներից ոչ մեկը մշտական աշխատանք չունի: Ընտանիքի կրտսեր տղան նախկինում պայմանագրային զինծառայող է եղել, սակայն Արցախյան 44-օրյա պատերազմի ժամանակ առաջնագծում հայրենիքը պաշտպանելիս ծանր վիրավորվել է:

Մեկ ամիս հիվանդանոցում բուժում ստանալուց հետո տուն է վերադարձել, սակայն առողջական տևական խնդիրների պատճառով, ցավոք, չի կարողացել շարունակել զինծառայությունը: Նրա ծնողները նույնպես առողջական լուրջ խնդիրներ ունեն և մշտական խնամքի կարիք ունեն: Ներկայումս նրա ընտանիքի ապրուստի հիմնական միջոցը գյուղատնտեսությունն է:

Հայկավանը Շիրակի մարզի չգազաֆիկացված գյուղերից է: Գյուղի բնակիչների համար տաք ջուր ստանալու միակ միջոցը փայտի վառարանն է կամ էլեկտրական ջրատաքացուցիչը: Երկուսն էլ շատ թանկ են և անարդյունավետ: «Արևային էներգիայի կիրառումը՝ որպես կենսապայմանների և առողջական վիճակի բարելավման միջոց՝ Հայաստանի հյուսիսային շրջանում բնակվող սոցիալապես անապահով ընտանիքների համար» ծրագրի շրջանակներում տրամադրված արևային ջրատաքացուցիչը մեծապես թուլացրեց նման դժվարության բախվող այս ընտանիքի լարվածությունը: Տնային տնտեսուհին բացատրեց. «Հայկական Կարիտասի անձնակազմի անսպասելի այցից հետո մենք սպասում էինք հույսով և անհամբերությամբ: Մեզ համար իսկական անակնկալ էր այս ծրագրի շահառու դառնալը»: Այս ընտանիքը մշտապես բազմաթիվ դժվարությունների է հանդիպել: Նախկինում նրանք պետք է ջուր տաքացնեին փայտի վառարանի վրա, որպեսզի լոգանք ընդունեին, իսկ սպասքը լվանալու համար օգտագործեին էլեկտրական ջրատաքացուցիչի ծորակ: Տրամադրված ՋԹ-ի տեղադրումից հետո թե՛ վառելափայտի, թե՛ էլեկտրաէներգիայի ծախսերը կրճատվել են, և ընտանիքի ֆինանսական բեռը թեթևացել է: «Այժմ մենք ավելի քիչ դժվարությունների ենք հանդիպում: Սա հսկայական աջակցություն է մեզ համար»,- մեծ ուրախությամբ նշեց տնային տնտեսուհին: Նա վերստին խորին երախտագիտության խոսք հղեց բարերարներին և բոլոր նրանց, ովքեր օգնեցին իրենց:

Թամարան Հայաստան է տեղափոխվել 2020 թվականի սեպտեմբերի 27-ին, երբ Լեռնային Ղարաբաղի շուրջ սրվեց հակամարտությունը: Վարդենիս քաղաքն առաջին կանգառն էր, որտեղ Թամարան որոշեց մնալ և սպասել հակամարտության ավարտին: Վարդենիս տեղափոխվելուց հետո Թամարան հոգեսոցիալական աջակցություն է ստացել «Վորլդ Վիժն Հայաստան» կազմակերպության կողմից, որտեղ էլ ծանոթացել է Կարիտաս ծրագրին: «Ինձ զանգեց «Երիտասարդները հանուն փոփոխության» ՀԿ-ի գործադիր տնօրենը, և ես տեղեկացա, որ նրանք իրականացնում են «Հասանելի կրթություն» նախագիծը, որ ֆինանսավորվում է Հայկական Կարիտասի կողմից»:
Նախագծի շրջանակներում Թամարային առաջարկվել է վարսահարդարման դասընթաց անցնել, որը նա նախընտրեց, քանի որ վարսավիրությունն ավելի ծանոթ էր, քան առաջարկվող մյուս երեք մասնագիտությունները: Երեք ամիս սովորելուց հետո Վարդենիսի Բաղեյանի անվան պետական քոլեջում, ներկայումս վարսահարդարման վճարովի ծառայություններ է մատուցում: «Դասընթացներից հետո ինձ տրամադրեցին վարսավիրական գործիքներ, և ես սկսեցի վճարովի ծառայություններ մատուցել: Այժմ ընտանիքիս ֆինանսական վիճակը կայունացել է: Ծրագրին մասնակցելը ոչ միայն կայուն եկամուտ ստանալու հնարավորություն ընձեռեց, այլ նաև լուծեց իմ գործազրկության խնդիրը՝ թույլ տալով ինձ ծանոթանալ նոր մարդկանց հետ և ինտեգրվել համայնքային կյանքին»:

47-ամյա Ալվարդ Խաչատրյանը չորս երեխաների մայր է: Մինչև «Կարի կենտրոն կանանց համար» նախագծի կողմից առաջարկվող դասընթացին մասնակցելը Ալվարդն աշխատում էր խանութում որպես վաճառողուհի: Նա նաև տորթեր ու խմորեղեն էր պատրաստում և վաճառում Գյումրու մի քանի խանութներում: Մի քանի տարի առաջ նրա ընկերուհին խորհուրդ էր տվել մասնակցել նախագծին: 2022 թվականին, հենց որ տեսել է սոցցանցերում ոմն հայի կողմից հրապարակված բաց կոչը, անմիջապես որոշել է դիմել: Նա թողել է աշխատանքը, քանի որ միշտ երազել է կարել սովորելու մասին:

Թեև Ալվարդը մասնագիտությամբ բուժքույր է, բայց, ըստ էության, այնքան էլ հետաքրքրված չէր բուժքույրի մասնագիտությամբ: Թե՛ մայրը, թե՛ տատիկը դերձակ են եղել, և Ալվարդը դեռևս փոքր տարիքից օգնել է նրանց: Նա ցանկանում էր կարել սովորել, որ կարողանա շարունակել ընտանեկան մասնագիտությունը և փոխանցել իր սերունդներին: Հայկական Կարիտասը, որ ֆինանսավորվում է Renovabis-ի կողմից, հայտնվելով Ալվարդի կյանքում՝ տվեց նրան կյանքը վերափոխող փորձառություն: Ալվարդն ասում է, որ շատ բան է սովորել նախագծից: Հատկապես ընդգծում է կարի ուսուցչի պրոֆեսիոնալիզմը. մարդ, որ ստիպել է նրան սիրահարվել կարին: Նա սկսեց զրոյից, և վերապատրաստման ավարտին տեղի ունեցավ հրաշքը. կարող էր կարել: Բացի այդ, նա սովորել է հայկական ասեղնագործության հատուկ տեսակ՝ «Մարաշ», և կարծում է՝ դա արվեստի գեղեցիկ գործ է: Անչափ ուրախ է, որ հնարավորություն է ունեցել սովորելու:

«Ես սկսնակ էի, դրա համար էլ շատ դժվարություններ ունեցա: Մինչ այստեղ գալը վստահ էի, որ հագուստ արդուկել գիտեմ, բայց պարզվեց, որ հմտորեն արդուկելն է կարևոր, եթե ուզում ես ինչ-որ բան լավ կարել: Նախ՝ պետք է արդուկել գործվածքը, և դա պետք է ճիշտ արվի: Նման մանրամասներն ինձ համար ցնցող էին»,- ասում է Ալվարդը:

Ալվարդն ամեն ինչ արեց այս մարտահրավերները հաղթահարելու համար: Դասընթացն ավարտելուց հետո նա կարծում է՝ տարիքը չպետք է նշանակություն ունենա, եթե որևէ մեկը ցանկանում է սովորել: Նա խրախուսում է իր երկու դուստրերին լավ սովորել և քրտնաջան աշխատել, քանի որ ֆինանսապես անկախ լինելը, ըստ նրա, շատ կարևոր է կնոջ համար:

Այժմ նա աշխատում է տնից, և դա, ըստ նրա, մեծ առավելություն է, թեև արդեն աշխատանքի առաջարկ է ստացել Գյումրու կարի արտադրամասերից մեկից: Ծրագրի շնորհիվ Ալվարդը ներկայումս կարողանում է գումար վաստակել, ֆինանսապես աջակցել ընտանիքին և հոգ տանել նրանց մասին, քանի որ այլևս ստիպված չէ շտապել աշխատանքի, այժմ կարող է հեշտությամբ տնօրինել իր ժամանակը: Ամենից առաջ նրա նորահայտ ուրախությունը նորածին թոռնիկի համար հագուստ կարելու մեջ է:

Դիմակայություն արտակարգ իրավիճակներում

Աջակցել համայնքների դիմակայունության բարձրացմանը թիրախ մարզերում ՝ պատրաստելով արտակարգ իրավիճակներին արձագանքելու ունակ, իրազեկ համայնքներ ու քաղաքացիներ և նպաստելով արտակարգ իրավիճակների ոլորտում պետական քաղաքականության և մեխանիզմների արդյունավետ կիրառմանը:

Նպաստել ԱՌԿ ոլորտում պետական մեխանիզմների արդյունավետ կիրառմանը՝ ցանցային համագործակցության միջոցով:Կազմակերպական մակարդակում մշակել և հաստատել արտակարգ իրավիճակներին արձագանքելու հայեցակարգը և ապահովել դրա կիրառումը՝ ըստ անհրաժեշտության:Նպաստել թիրախ մարզերի բնակչության և շահագրգիռ կառույցների՝ արտակարգ իրավիճակներին արձագանքելու կարողությունների բարձրացմանը:

Արցախ/Լեռնային Ղարաբաղ

2023 թվականի սեպտեմբերի 19-ի կեսօրին ադրբեջանական զինուժը լայնածավալ ռազմական հարձակում սկսեց Լեռնային Ղարաբաղի դեմ՝ թիրախավորելով քաղաքացիական համայնքները և խաղաղ բնակչությանը: Պայմանավորվածություն ձեռք բերվեց ռազմական գործողությունների դադարեցման վերաբերյալ: Սեպտեմբերի 24-ին ԼՂ-ից սկսվեց հայերի զանգվածային բռնի տեղահանումը դեպի Հայաստանի Հանրապետություն: Հոկտեմբերի 9-ի դրությամբ **100,632** բռնի տեղահանվածներ, այդ թվում՝ մոտ **30,000** երեխաներ, տարհանվել են Հայաստան:

Հայկական Կարիտաս

Շարունակում է մարդասիրական աջակցություն ցուցաբերել ԼՂ-ից բռնի տեղահանված բնակչությանը: Արարատի մարզի երեք համայնքներում (Մասիս, Սիս, Նորամարգ) բաժանվել է 500 անկողնային պարագաներ:

Հայկական Կարիտասը շարունակում է աջակցել տեղահանված տնային տնտեսություններին (100 անձ) Շիրակի մարզի Թորոս ամառային ճամբարում: Կազմակերպությունը նաև տրամադրել է սննդի և հիգիենայի պարագաներ (100), տաք ծածկոցներ և անկողնային սպիտակեղեն (ավելի քան 500):

Հայկական Կարիտասը 250,000 եվրո նախնական բյուջեով Արագ արձագանքման հայտ է ներկայացրել Միջազգային Կարիտասի միջոցով՝ 454 տեղահանված տնային տնտեսությունների հիմնական կարիքների (սնունդ և ոչ պարենային պարագաներ) համար միջոցներ հայթայթելու, ինչպես նաև 250 տեղահանված անձանց հետտրավմատիկ հոգե-սոցիալական ծառայություններ մատուցելու: Կարիտասի հետևյալ անդամ կազմակերպությունները ներդրում են կատարել Հայաստանում. Կարիտաս Ավստրիա (50,000 Եվրո), Կարիտաս Դանիա (12,500 Եվրո), Կարիտաս Բելգիա (50,000 Եվրո), Կարիտաս Իսպանիա (172,290 Եվրո), CAFOD Արտասահմանյան զարգացման կաթոլիկ գործակալությունը, (22,500 Եվրո), Կարիտաս Կանադա (24,375 Եվրո) , Կարիտաս Կորեա (47,384 Եվրո):

Սյունիքի մարզի Հայկական Կարիտասի տեղական անձնակազմը 100 փաթեթ պարենային և ոչ պարենային ապրանքներ է բաժանել Գորիս և Տեղ համայնքների (Արավուս, Կոռնիձոր, Քարաշեն գյուղեր) բռնի տեղահանված բնակչությանը:

Չնայած իր տարիքին՝ 5-ամյա Լուսիան ստիպված է երկրորդ անգամ լքել իր տունը եղբայրների, ծնողների ու տատիկի հետ: Պատերազմի հետևանքով նա թողել է իր ընկերներին, սիրելի խաղալիքներն ու իրենց նոր ու գեղեցիկ տունը Արցախում:

Առաջին անգամ 2020 թվականին ադրբեջանական զինուժի հարձակման հետևանքով նրանք լքել են Արցախի Մարտունու շրջանի Թաղավարդ գյուղը և տեղափոխվել ՀՀ Շիրակի մարզի Հայկական գյուղ: Մի քանի ամիս Հայկականում մնալուց հետո վերադարձել են հայրենի գյուղ՝ Թաղավարդ: Չնայած գյուղի դիմաց ադրբեջանական ռազմական անցակետերի վտանգին ու պարբերաբար հնչող կրակոցներին՝ Լյուսիայի ընտանիքը մյուս թաղավարդցիների նման գյուղում մնաց մինչև 2023 թվականի սեպտեմբեր:

Վերջին հարձակման ժամանակ երեխաներն ու մեծահասակներն արդեն գիտեին, թե որտեղ պետք է թաքնվեին դպրոցի ռումբերի ապաստարանում: «Ես վախենում էի կրակոցներից, բայց եղբայրներս ինձ հետ էին»,- ասում է Լուսիան՝ հավելելով, որ ավագ եղբայրը 15 տարեկան է, մյուսները՝ 14 և 13 տարեկան: Առաքելյանները և գյուղի մյուս բնակիչները գիտեին, թե որքան ժամանակ կպահանջվի թշնամու զենքերը լցնելու համար և հասկացան, որ գյուղից հեռանալու համար ընդամենը կես ժամ է մնացել: Մինչ որդիները, կինը և մայրը հեռանում էին գյուղից՝ իրենց հետ ոչինչ չվերցնելով, ընտանիքի հայրը, որ փրկարար էր, օգնում էր մյուսներին: Արկադին՝ հայրը, 10 տարեկան էր, երբ հայրը զոհվեց պատերազմում: Ասում է՝ այնքան դժվարություններ է տեսել, որ չէր ցանկանա, որ նույնիսկ իր թշնամու երեխան տեսներ այդ դժվարությունները: Հայկականում ընտանիքը վարձով տուն է գտել, որդիները դպրոց են գնում, իսկ Լուսիան՝ մանկապարտեզ: «Ես նոր ընկերներ ունեմ, բայց կարոտում եմ մեր բակը և իմ խաղալիքները»,- արցունքն աչքերին՝ ասաց աղջիկը:

Հայկական Կարիտասը Հայաստանում առաջիններից էր, որ այցելեց Առաքելյանի վարձակալած բնակարանը, կատարեց կարիքների գնահատում և ընտանիքին վառարան ու էկո ծածկոց նվիրեց անմիջապես: Շիրակը գտնվում է Հայաստանի հյուսիսային մասում, և վառարանը շատ կարևոր է ոչ միայն ջեռուցման, այլև ճաշ պատրաստելու համար: «Ամուսնուս մահից հետո երեք երեխաներիս ժինգյալով հացով եմ մեծացրել»,- ասում է Արկադիի մայրը՝ տիկին Ռոմելան՝ թոռնուհու՝ Լյուսիայի հետ խմորը պատրաստելով: Լուսիան իսկական տնային տնտեսուհու նման փորձում է խմորը բացել և կանաչիները դնել խմորի մեջ՝ փակելով իր փոքրիկ ձեռքերով: Իսկական արցախցի աղջիկները մանկուց պետք է կարողանան պատրաստել այս ազգային ուտեստը:

Ժինգյալով հացը տափակ հացի տեսակ է, որը լցոնված է մանր կտրատած խոտաբույսերով և կանաչ բանջարեղենով: Այն արցախցիների և սյունեցիների ավանդական ուտեստն է և ավանդաբար եղել է սուղ ժամանակներում՝ սովին ու պատերազմին: Անթթխմոր խմորը փաթաթում են այնքան, մինչև թղթի պես բարակ դառնա, այնուհետև լցնում են միջուկով, որը բաղկացած է 10-20 տեսակի խորանարդիկներով և յուղած վայրի ու մշակովի խոտաբույսերից:

Ասում են, որ բացի վառարանի ջերմությունից, հիացած են նաև կարիտասցիների ջերմությամբ ու վերաբերմունքով: «Այն, ինչ մենք տեսանք, իսկապես մեզ հույս ու հավատ է ներշնչում, որ միայնակ չենք»: Աղջիկը երազում է բժիշկ դառնալ: Միակ բանը, որ Լուսիան ցանկանում է այսօր, խաղաղությունն է, այլևս երբեք չկրակեն իր վրա և երբեք ստիպված չլինի բաժանվել իր նոր ընկերներից:

Ձիով՝ Բերքաձորից Կոռնիձոր: Արցախում ամեն ինչ կորցնելով՝ Ռաֆիկ Սարգսյանը Կոռնիձորում թոռ է «ձեռք բերել»:

Ավելի քան 24 ժամ 60-ամյա Ռաֆիկ Սարգսյանը ձիով Բերքաձորից Կոռնիձոր է գնացել՝ 3-ամյա Բույանի հետ ժամանելով Հայաստան:

«Սեպտեմբերի 19-ը սովորական օր էր, ես անասուններին դաշտ էի տանելու, երբ արկերի ձայները լսվեցին, երկու օր անընդմեջ կրակոցներ եղան, հետո հայտարարեցին, որ պետք է հեռանանք գյուղից»,- պատմեց Ռաֆիկ Սարգսյանը:

Կյանքում չորրորդ անգամ նա թողել է Արցախի տունն ու ֆերման, նախ՝ Քարվաճառը, ապա՝ Ակնան և Ասկերանը: Նա առավել մորմոքում է որդիների ու կնոջ գերեզմանն այնտեղ թողնելու համար: 2014 թ.-ին Ռաֆիկի կինը մահացել և հուղարկավորվել է Քարվաճառում, իսկ պայմանագրային զինծառայող որդիները՝ 28 և 22 տարեկան, զոհվել են 44-օրյա պատերազմում և թաղվել Ստեփանակերտի եղբայրական գերեզմանատանը: «Ես չեմ ափսոսում, ինչ թողել եմ, բայց որ երեխաներս են այնտեղ...»,- արցունքն աչքերին՝ ասում է Ռաֆիկը: 44-օրյա պատերազմում նա ինքն էլ ստացել բեկորային վիրավորում և կորցրել մեկ աչքի տեսողությունը: Բեկորային վնասվածքները նրան շարունակ հիշեցնում են կոտորածը, բայց ավելի անտանելի է ընտանիքի շիրիմներն ու հայրենի հողը կորցնելու ցավը: Մինչ Կոռնիձոր հասնելը ադրբեջանցիները փայտով հարվածել են նրա ոտքին, հայհոյել, փորձել են խլել նրա ձին, սակայն նա բաց չի թողել:

Կոռնիձորը ոչինչ չուներ: Հաքարի կամրջի մոտ արցախցիներին ուտելիք բերած Գրիգոր Ղահրամանյանը տեսել է, որ ձիու վրա գալիս է վիրավոր ոտքով մի տղամարդ և որոշել է նրան ապաստան տալ իր հարկի տակ: Նրա վիրավոր ոտքը վերջապես բուժվեց այստեղ, ու կարճ ժամանակում Ռաֆիկը ոչ միայն ջերմ անկյուն գտավ Կոռնիձորում, այլև ընտանիք: Ամենակարևորը՝ նա գտավ իր թոռանը և տան ամենափոքրին՝ Օլեգին, որ նրան «պապիկ» է ասում՝ հավելելով. «Ես նրան մեր տնից ոչ մի տեղ չեմ թողնի»: Ոչ միայն Օլեգը, այժմ բոլորը Ռաֆիկին «պապիկ» են անվանում: «Հիմա մեր տան ուրախությունն է մեր պապիկը, շատ ենք կապվել, սիրում ու հարգում ենք, շատ համեստ ու բարի մարդ է»,- ասում է մորաքույր Նելլին:

Տեսնելով կոռնիձորցու հյուրընկալությունն ու բարի վերաբերմունքը՝ Ռաֆիկը սրտի մի անկյունում հույս է փայփայում, որ աշխարհը չի քանդվել, և մարդկություն կա: «Շնորհակալ եմ բոլոր նրանց, ովքեր կարող են ձեռք մեկնել և օգնել ինձ նման մարդկանց կյանքի դժվարությունները հաղթահարելու»,- ավելացնում է պապիկը:

Ռաֆիկ Սարգսյանի ցանկությունն է հիմա, որ կարողանա երախտապարտ լինել իրեն ու իր Բույանին հյուրընկալած ընտանիքին, մի քանի անասուն պահել թե՛ ընտանիքին օգնելու, թե՛ աշխատանք ունենալու համար:

Հայկական Կարիտասը մարդկանց առաջին խմբերից է, որ Ռաֆիկ պապի համար սնունդ և հիգիենայի փաթեթներ է տրամադրել, և սա միակ աջակցությունը չէ: Առաջիկայում Ռաֆիկ Սարգսյանը կվայելի նաև Կարիտասի Սյունիքի թիմի ուշադրությունը:

Սիրով և սրտացավությամբ

Արմեն Հակոբյանը 2020 թվականի պատերազմից հետո ընտանիքով տեղափոխվել է Հայաստան: Այդ ժամանակ Հայկական Կարիտասն առաջին կազմակերպություններից էր, որ օգնության ձեռք մեկնեց Արցախից բռնի տեղահանված ընտանիքին: Այժմ Արմենն արդեն Կարիտասի մի մասն է, նա սիրով ու սրտացավությամբ օգնում է 2023 թվականի ադրբեջանական հարձակման հետևանքով Արցախից բռնի տեղահանված ընտանիքներին:

Քաշաթաղի շրջանի գյուղ Վուրգավանում էին բնակվում մինչև պատերազմ: Գյուղը 45 ընտանիք ուներ: Գյուղը 2020 թվականի հարձակման հետևանքով անցավ Ադրբեջանի կազմ: Մինչև զորքի գյուղ մտնելը՝ մեկ օր առաջ, բնակիչներին հնարավորություն տրվեց լքելու գյուղը: «Գյուղացիները մի կերպ հասցրին դուրս գալ»,-պատմում է Արմենը՝ նշելով, որ իր ընտանիքը այդ ժամանակվանից է տեղափոխվել Սյունիքի մարզ՝ Գորիս քաղաք: Արցախում շատ բան են թողել՝ մեծ երկհարկանի տուն, երկու հեկտար խաղողի այգի, երկու հեկտար արքայախնձորի այգի, որոնցից միայն լուսանկարներն են կարողացել պահպանել:

Արմենը մանկավարժների ընտանիքից է, հայրը մաթեմատիկայի ուսուցիչ է, Արմենը՝ պատմության ուսուցիչ, իսկ կինը՝ տարրական դասարանների ուսուցչուհի: **«Բոլորս էլ աշխատում էինք: 2007-2020 թվականներին եղել եմ նաև Ուռեկանի դպրոցի տնօրենը: «Որպես դպրոցի տնօրեն արժանացել եմ պարգևների, ինչպես նաև Արցախի նախագահի և վարչապետի մեդալների: Այգեգործությամբ էլ ենք զբաղվել»,- ասում է Արմենը:**

Գորիս տեղափոխվելուց հետո Արմենը որոշել է զբաղվել իր սիրած գործով. պետության տրամադրած ֆինանսական աջակցությամբ Քարաշեն համայնքում գնել է 2 հա հողատարածք, հիմնել խնձորի ու ընկույզի այգի: **«Արդեն երեք տարի է՝ սպասում ենք, որ հաջորդ տարի բերք է տալու: Մենք այգի ենք հիմնել և փորձում ենք հաստատվել: Պետք է հույսով ապրենք, մտքում ու սրտում պահելով Արցախը՝ շենացնենք Հայաստանը»:**

Հայաստան տեղափոխվելու ընթացքում Արմենի համար բավական դժվար է եղել, խնդիրները՝ շատ, բայց երջանիկ պատահականությամբ ճանաչվել է Հայկական Կարիտասի «Աջակցություն Արցախից տեղահանված ազգաբնակչությանը» ծրագրի շահառու, հետո ծրագրում գյուղատնտեսի թափուր հաստիքի մասին իմանալով՝ դիմում ու աշխատանքի է անցնում Կարիտասում:
Այս ընթացքում Արմենն առաջարկ է ստանում՝ դառնալ դպրոցի տնօրեն, սակայն տեսնելով Կարիտասի կատարած աշխատանքը՝ որոշում է հրաժարվել այդ առաջարկից՝ մնալով ու աշխատելով Կարիտասում: **«Ժամանակին Կարիտասը իմ՝ կարիքավորիս կողքին էր, որ ես հույսս չկորցնեմ ու ինձ կարևոր զգամ, հիմա էլ ես եմ կարիտասցիների հետ օգնում նոր տեղահանվածներին: Սա ինձ համար ավելի հոգեհարազատ է,-ասում է Արմենը՝ հավելելով.- հանուն սիրով ու սրտացավությամբ աշխատանքի կարելի է հրաժարվել պաշտոններից»:** Հիմա ամենամեծ գնահատականը Արմենի ու իր թիմակիցների համար մարդկանց շնորհակալությունն է ու հույսով լի աչքերը:





Ընդհանուր 2022 համար 4,039,075 եվրո

Եկամուտներ 2023 (Եվրո)



Ռազմավարական ուղղություններ 2023 (Եվրո)



Ընդհանուր 2023 համար 5,259,139 եվրո